ՀՏԴ 82.9(75)

Գրականություն

Անահիտ ՕՀԱՆՅԱՆ
Շուշիի տեխնոլոգիական համալսարան, Արցախ

ԱՐՑԱԽ ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾ ԳԵՂԱԳԵՏԸ

«Արցախ աշխարհի մեծ գեղագետը» հոդվածը վերաբերում է Արցախի մշակույթի կարկառուն ներկայացուցիչ Ս.Գաբրիելյանի ստեղծագործական աշխարհի քննությանը:
Ս. Գաբրիելյանը իր ներդրումն է ունեցել Արցախի նկարչական արվեստի բնագավառում՝ ստեղծելով իր՝ զուտ գաբրիելյանական աշխարհը՝ ուրույն ոճով և ձեռագրով, ներաշխարհից բխող պատկերացումներով ու ինքնատիպ գաղափարներով:
Ս. Գաբրիելյանը արվեստագետ է, ով օգտագործել է դարերով կուտակված հայկական արվեստի գեղարվեստական միջոցների զինանոցը՝ կատարելապես տիրապետելով դրանց առանձնահատկություններին:
Գաբրիելյանական արվեստի քննությունը մեզ հնարավորություն է տալիս բացահայտել Արցախի արվեստի դպրոցի տիպաբանությունը, արվեստի այս կամ այն ճյուղերի փոխներթափանցումը և յուրահատուկ սինթեզը:
Ս. Գաբրիելյանը ազգային և համամարդկային նվիրյալ արվեստագետ է՝ իր ինքնատիպ արվեստով, կերպարակերպման իր յուրահատուկ ոճով:
Նրա շուրջ 1500 կտավները գտնվում են արտերկրի մասնավոր հավաքածուներում, ինչը մեծ պատիվ է Արցախը միջազգային հարթակում ներկայացնող գեղանկարչի, բոլոր արցախցիների համար:

Ս. Գաբրիելյանը իր դպրոցով, յուրահատուկ ձեռագրով ու ոճով անաղարտ պահեց հայրենի Արցախի կերպարը: Իսկ այդ կերպարը նրա կտավներում գոյության բանաձև է և արյան կանչ:

Բանալի բառեր՝ մշակութային ժառանգություն, հետազոտություն, կերպարվեստ, գեղարվեստական միջոցներ, նկարչություն, արցախյան դպրոց, ստեղծագործական աշխարհ, հետաքրքիր ու ինքնատիպ կտավներ, երևակայություն, ներքին զգայականություն, դիմանկարներ, ազգային մշակույթ, կոմպոզիցիոն առանձնահատկություններ, ներաշխարհի բացահայտում:

А. А. Оганян

ВЕЛИКИЙ ЭСТЕТ АРЦАХСКОГО МИРА

В статье «Великий эстет арцахского мира» рассматривается мир творчества яркого представителя арцахской культуры С. Габриеляна.

С. Габриелян внес свой вклад в искусство арцахской живописи, создав свой, чисто габриелянский мир, с неповторимым стилем и почерком, с возникающими из внутреннего мира оригинальными идеями и представлениями.

С. Габриелян – художник, который использовал накопленный веками арсенал художественных средств армянского искусства, в совершенстве овладев их особенностями.

Изучение габриелянского искусства дает нам возможность обнаружить типологию арцахской художественной школы, взаимопроникновение разных направлений искусства и их своеобразный синтез.

С. Габриелян – истинный национальный и общенародный художник со своим самобытным искусством, своей неповторимой манерой перевоплощения.

Около 1500 его картин находятся в частных коллекциях за рубежом, что для художника, представляющего Арцах на международной арене и для всех арцахцев является большой честью.

Своей школой, неповторимым почерком и стилем С. Габриелан сохранил первозданным образ родного Арцаха. И этот образ в его картинах — формула существования и зов крови.

Ключевые слова: *культурное наследие, исследование, изобразительное искусство, художественные средства, арцахская школа живописи, творческий мир, интересные и уникальные картины, воображение, внутреннее ощущение, портреты, национальная культура, композиционные особенности, открытие внутреннего мира.*

A. Ohanyan

THE GREAT ESTHETE OF THE ARTSAKH WORLD

The article "The great esthete of the Artsakh world" deals with the world of creativity of a prominent representative of the Artsakh culture S. Gabrielyan.

S. Gabrielyan contributed to the art of Artsakh painting, creating his own, purely Gabrielian world, with a unique style and handwriting, with original ideas arising from the inner world.

S. Gabrielyan is an artist who used the arsenal of artistic means of Armenian art accumulated over the centuries, mastering their features to perfection.

The study of Gabrielyan art gives us the opportunity to discover the typology of the Artsakh art school, the interpenetration of different areas of art and their peculiar synthesis.

S. Gabrielyan is a true national and international artist with his original art, his unique manner of transformation.

About 1500 of his paintings are in private collections abroad, which is a great honor for the artist representing Artsakh in the international arena and for all Artsakh residents.

With his school, unique handwriting and style, S. Gabrielan preserved the original image of his native Artsakh. And this image in his paintings is the formula of existence and the call of blood.

Key words: *cultural heritage, research, fine arts, artistic means, Artsakh school of painting, creative world, interesting and unique paintings, imagination, inner sensuality, portraits, national culture, compositional features, discovery of the inner world.*

Թերի կլինի խոսել 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի մշակույթի մասին, առանց Արցախի մշակույթի կարկառուն ներկայացուցիչ Սամվել Գաբրիելյանի մշակութային ժառանգության գնահատման:

Բոլոր ժամանակներում էլ Արցախի մշակույթի գործիչներն իրենց ներդրումն են ունեցել համազգային արվեստի բնագավառում: Արցախյան արվեստի գործիչները՝ նկարիչներ, քանդակագործներ, կիրառական արվեստի վարպետներ, դիզայներներ, արմատներով կապված են եղել և այսօր էլ կապված են հայրենիքին՝ իրենց մասնագիտական և քաղաքացիական պարտքը կատարելով ժողովրդի հանդեպ՝ ստեղծելով լիարժեք ու մնայուն ստեղծագործություններ: Միշտ էլ արժեքավոր ստեղծագործությունը իր ճանապարհը հարթելու եղանակը գիտե՝ ճանաչելի դարձնելով իրեն և հեղինակին: Մեր հետազոտությունը պարզել է, որ 20-րդ դարի և 21-րդ դարասկզբի Արցախի արվեստագետների որոշ աշխատանքներում զգացվում է նշված դարաշրջանների արվեստի զանազան ուղղությունների զարգացումն ու խորացումը: Շատ արվեստագետներ էլ փորձել են ձերբազատվել ազդեցություններից, կերպարվեստի՝ բարդություններով լի աշխարհում գտնել իրենց ուրույն ոճը և ձեռագիրը՝ ի ցույց դնելով միայն ներաշխարհից բխող պատկերացումներն ու ինքնատիպ գաղափարները:

Արցախյան մշակույթի պատմության մեջ անգնահատելի է Ս.Գաբրիելյանի տեղն ու դերը: Արվեստագետ, ում ինքնատիպ ոճերի բացահայտումը այսօր խիստ կարևոր դեր ունի Արցախի արվեստի պատմության մեջ:

Ս. Գաբրիելյանը արվեստագետ է, ով օգտագործել է դարերով կուտակված հայկական արվեստի գեղարվեստական միջոցների զինանոցը՝ կատարելապես տիրապետելով դրանց առանձնահատկություններին:

Հայկական արվեստի, մասնավորապես նկարչության արցախյան դպրոցը, բազում ստեղծագործական կապեր ունի, և դարերի նրա փորձը, ուսումնասիրության մեթոդիկան, տիպաբանությունը, ինքնատիպությունը շատ կարևոր նշանակություն ունեն Արցախի արվեստի զանազան ճյուղերի մասին համաշխարհային կարծիքի ձևավորման գործում:

Ս. Գաբրիելյանի ստեղծագործական աշխատանքի քննությունը մի քայլ առաջ կմղի արցախյան արվեստի շուրջ ստեղծված տեսություններն ու

վերլուծությունը: Մի հոդվածի սահմաններում դժվար է բացահայտել Ս.Գաբրիելյանի ստեղծագործական աշխատանքը, քանի որ այն բազմակողմանի ու բազմալեզու է, ինքնատիպ, ազգային ու համամարդկային:

Գեղագիտության պատմության մեջ եղել են արվեստի տեսակների դասակարգման շատ փորձեր: Ս. Գաբրիելյանի արվեստի քննությունը մեզ հնարավորություն է տալիս բացահայտել Արցախի արվեստի դպրոցների տիպաբանությունը, արվեստի այս կամ այն ճյուղերի փոխներթափանցումը և յուրահատուկ սինթեզը: Ս. Գաբրիելյանի ստեղծագործական աշխարհի քննությունը հնարավորություն է տալիս նորովի գնահատել նրա վաստակը՝ պատկերագրման ուրույն ոճը, մտածելակերպը, Արցախի էթնոավանդույթների, սովորությունների արժևորումը: Ս. Գաբրիլյանը չի գնում տրորված ճանապարգհով, չի մեկուսանում իր մեջ, նվիրվում է մարդկությանը՝ հետաքրքիր ու ինքնատիպ կտավների նրբագեղ ոճական հնարանքների միջոցով:

Ս. Գաբրիելյանը այն բացառիկ դեմքերից է, ով ստեղծել է գեղանկարիչների իր՝ գաբրիելյանական դպրոցը և իր տաղանդի ուժով Արցախում նոր որակի հասցրել գեղանկարչական արվեստը և ստեղծել գունեղ, լուսավոր կտավներ, որոնք այսօր էլ խնամքով պահպանվում են աշխարհի տարբեր երկրների թանգարաններում և ցուցասրահներում: Տաղանդավոր արվեստագետն իր շուրջը համախմբեց արվեստագետների՝ ստեղծելով «Գամ ար» նկարիչների միջազգային կազմակերպությունը, և իր վաստակը ներդրեց Արցախի մշակույթի պատմության մեջ: Տաղանդավոր արվեստագետը գույների, հույզերի ընկալումների իր ներաշխարհով զարգացրեց գեղանկարչական դպրոցի ավանդույթները: Տեղին է հիշել մեծ գրողի խոսքերը.

Ինչքա՜ն ծաղիկ պիտի բուսներ,
Որ չբուսավ էս հողին,
Ի՜նչ պատասխան պիտի ես տամ,
Հող ու ծաղիկ տվողին…

Ս. Գաբրիելյանը կիսատ երազներ, կիսատ գույներ, կիսատ աշխարհընկալումներ է թողել, սակայն արած - թողածն էլ բավական է՝ պատկերացում կազմելու համար նրա արվեստի մնայուն աշխարհի մասին:

Արցախի վաստակավոր լրագրող Ն. Սողոմոնյանը պատահական չի գրել. «Սամվելը մի առանձին սիրով ու երևակայությամբ է հյուսել հայի, մասնավորապես արցախցու կերպարը, ներկայացրել նրա հոգևոր ու ֆիզիկական մաքառումները, հայրենիքի կերպարը նա բացահայտել է

յուրովի ու նորովի: Հայրենիքը նկարչի համար ոչ թե լեռ է, դաշտ, գետ, այլ՝ արյան հասցե: Առանց այս հող ու ջրի նա չէր կարող ապրել» [1]:

Հիրավի, արցախյան արվեստը շատ բան կկորցներ առանց Սամվել Գաբրիելյանի, ում դաժան կյանքը երբեք չփոխեց, ով պահպանեց իր մարդկային նկարագիրը՝ համեստ, ազնիվ, բարի ու լուսավոր: Ն.Սողոմոնյանը վերոնշյալ հոդվածում վկայակոչում է Հարրի Գիլմորի (ԱՄՆ առաջին դեսպանը Հայաստանում) խոսքերը: Իր ձեռք բերած մի նկարի առիթով նա ասել է, որ ինքը մի երկրի դեսպանն է, իսկ Սամվելն Արցախի դեսպանն է ամբողջ աշխարհում[2]:

Ս. Գաբրիելյանը ծնվել է 1951թ. նոյեմբերի 3-ին, Լեռնային Ղարաբաղում, որտեղ ապրել ու ստեղծագործել է մինչև 2015 թվականի հուլիսի 22-ը՝ մինչև կյանքի վերջը:

Սովորել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանի, ապա Երևանի գեղարվեստական ինստիտուտի գեղանկարի բաժիններում: Բազմաթիվ հանրապետական և համամիութենական ցուցահանդեսներում միշտ էլ ուշադրություն են գրավել նրա բազում կտավները:

Գեղանկարչի բազմաթիվ աշխատանքներ («Տագնապ», «Կանայք», «Սիրո պահ», «Պայքար», «Զարթոնք», «Սիրո հրեշտակ», «Գիշեր», «Ջրահարս», «Ցավի բարձունք», «Տեսիլք», «Գաղթ», «Կոմիտաս», «Շուշի» և այլն) կյանքոտ, չափի զգացում, ընտիր ճաշակ, և կրքոտ հոգեվիճակներ արտահայտող երկեր են:

Նվիրյալ արվեստագետ էր Ս. Գաբրիելյանը: Ակնհայտ է, որ նրա վաստակը երբեմն լռության է մատնվել՝ ճիշտ ու տեղին չգնահատվելով իբր արվեստի հրաշագեղ նմուշներ, սակայն դա նրան չի մտահոգել, որովհետև արվեստը ստեղծագործական պահի արգասիք է, սրտի ու մտքի սինթեզ:

Ստեղծագործել է այն սկզբունքով, որ արվեստագետը ազգի ցավն այնպես պիտի ներկայացնի, որ այն հասկանալի և ընդունելի լինի նաև օտարին: Ամեն մի ազգային համամարդկային հնչողություն պիտի ունենա: Այս իմաստով խորախորհուրդ են Ս. Գաբրիելյանի կտավները: Գաբրիելյանական կերպարները ամենուր են: Նրանք մերթ անցյալի խորքից են հառնում, մերթ ծնվում են հայրենի հողից ու եզերքից, մերթ կարծես իջնում են տիեզերքից, բայց բոլորն էլ կարևոր տեղ են զբաղեցնում ժանրային առումով բազմազան գաբրիելյանական դիմանկարներում և

---

[1] ***Ազատ Արցախ***, *Ստեփանակերտ, 2016թ. 5 նոյեմբեր, էջ 6: Տե՛ս՝ Ն. Սողոմոնյանի, «Նրա համար կարևորը ստեղծագործական պահն էր» հոդվածը:*

[2] *Նույն տեղում, էջ 6:*

կոմպոզիցիաներում: Բնականաբար, գաբրիելյանական կտավների վրա սկզբնական շրջանում (ինչպես շատերի) զգացվում է համաշխարհային արվեստի մեծագույն ստեղծագործությունների ազդեցությունը: Սակայն ուսումնասիրությունը պարզում է, որ աստիճանաբար նրա արվեստը դառնում է ավելի զուլալ, ավելի ինքնատիպ և միայն իրենը: Կերպարակերտման նրա արվեստում գնալով ակնհայտ է դառնում արվեստագետի ներքին զգայականությունը: Բազմազան են Գաբրիելյանի կտավների թեմաները:

Այնտեղ մարդկային կյանքն է, շրջապատը՝ իր հետաքրքրություններով: Վկան՝ «Զրույց», «Թագավորների հանգիստը», «Կինը ծովափին…» և բազում այլ գործեր: Կարևոր է մի առանձնահատկություն. եթե դիմանկարներում Ս. Գաբրիելյանը ընդհանրացնում է կերպարները, ապա կոմպոզիցիաներում տեսնում ենք երևույթների ընդհանրացում և ամբողջացում:

Ս. Գաբրիելյանի արվեստը, նրա ստեղծագործական կերպարը խիստ համահունչ է ժամանակաշրջանին ու սերունդների համար դաս ու դասագիրք է:

Մեծ է նրա ավանդը Արցախի գեղանկարչական դպրոցի զարգացման գործում: Որպես մանկավարժ արվեստագետը Արցախում հիմնեց իր դպրոցը՝ իր ստեղծագործություններով ապրելով արվեստասեր սաների հոգիներում:

«Ասում են՝ անփոխարինելի մարդիկ չեն լինում: Գուցե շատ շատերի համար դա ճշմարիտ է: Ինչպես ասում են՝ գոյություն ունեն օրենքներ և… բացառություններ՝ օրենքից դուրս: Կարծում ենք, նման բացառիկ երևույթներից էր Ս. Գաբրիելյանը»,-կարդում ենք «Ազատ Արցախ» թերթի նոյեմբերի 5-ի համարում: Լրագրող Նվարդ Սողոմոնյանը լրացնում է. «Նրա արվեստում պայմանականությունը գերակշռում է, որը կռահելու, մտորելու տեղիք է տալիս: Սամվելի մոտ առաջին պլան են մղվում գույնի փիլիսոփայությունն ու գեղարվեստը: Նա անընդհատ որոնումների մեջ էր ու հղկում էր իր գործերը: Նրա ստեղծագործության գլխավոր հատկանիշներն են գունային կոլորիտը և պայմանականությունը. շարժում, անընդհատ շարժում, և նրա գործերում ծնվում է լույսը: Նման գործերով է հասարակության մեջ ձևավորվում արվեստի ընկալման կերպը»[1] :

Հիրավի, բազմաբնույթ ու բազմաշերտ է Գաբրիելյանի արվեստը: Նրա ներաշխարհը նախ և առաջ հայրենի Արցախն է՝ նրա լինելության խորհուրդը, նրա կտավների սրբազան ակունքը:

Ս. Գաբրիելյանի համոզմունքով՝ իսկական նկարիչը նա է, ով գտնում է իր սեփական ոճը: Առանց սեփական ձեռագրի, թեմայի նույնիսկ սեփական

---

[1] ***Ազատ Արցախ***, *Ստեփանակերտ, մարտի 20, 2021, էջ 6:*

փիլիսոփայության արվեստագետը, առավել ևս նկարիչը նկարիչ չէ: Ոճը ինչ-որ տեղից չի վերցվում, այն ծնվում է, ձևավորվում յուրաքանչյուր ստեղծագործողի ստեղծագործական աշխարհում՝ յուրատիպ ու յուրօրինակ:

Ս. Գաբրիելյանի համար բնականաբար ուղենիշ էին խորհրդային տարիների արվեստի առանձնահատկությունները: Դա, իհարկե, բնական է, որովհետև ստացած կրթությունը դա է պարտադրում: Ժամանակի ուսումնական հաստատություններն ունեին, այսպես կոչված, «սոցիալիստական գեղարվեստական ոճ ու ուղղվածություն»: Արվեստագետի համար հեշտ չէր դուրս գալ կաղապարներից և ստեղծել միանգամայն ինքնուրույն, անհատական ոճ: Հեշտ չէր ինքնուրույն հայեցակետի ձևավորումը, երևույթների ինքնուրույն ըմբռնումը:

Ս. Գաբրիելյանը զերծ չմնաց իրականության նոր ընկալումից: Խորհրդրդային արվեստագետների նման նա ևս փորձեց ընտրել արևմուտքի արվեստի ոճը, և շատերի նման նրա համար կարևորվեց ազգային արվեստի գաղափարախոսությունը: Գաբրիելյանը ուղղվեց դեպի ազգային մշակույթը:

Մի առիթով արվեստագետը ասել է. «Երբ ես գրիչ կամ մատիտ եմ վերցնում, ես չեմ մտածում այն մասին, որ սկսում եմ նկարել, ձեռքս ինքն է նկարում, գուցե և մեխանիկորեն, բայց քանի որ քո ներսում կա կոմպոզիցիոն մտածողություն, դրա համար էլ ձեռքդ գնում է այն ուղղությամբ, ինչ դու ես ուզում»: Ս.Գաբրիելյանի որոշ ստեղծագործություններ կրում են սյուրռեալիզմի ազդեցությունը: Բոլոր դեպքերում էլ Գաբրիելյանը եզակի գեղագետ է: Անգամ հակասական երևույթները, խորհրդավոր տեսիլքները խոսում են մարդու հոգեվիճակի հետ, ընտրված են ճաշակով, գեղագետի նրբազգացողությամբ:

Ս. Գաբրիելյանին նվիրված հոբելյանական ցուցահանդեսի բացման ժամանակ արվեստի վաստակավոր գործիչ, տաղանդավոր քանդակագործ Յու. Հովհաննիսյանը, ընդգծելով Ս. Գաբրիելյանի բացառիկ տաղանդը գեղանկարչության մեջ, ցավով նշեց, որ «Սամվելի տեղը դատարկ է մնում… Նա միաժամանակ խոստովանեց, որ Գաբրիելյանը այնպիսի հարուստ ժառանգություն է թողել, որ սերունդները դրանով հագեցնելու են իրենց հոգևոր ծարավը: Սամվելը խորհող ու որսող հայացք ուներ և շատ արագ էր ընկալում երևույթները և վարպետորեն դրանք վերարտադրում»[1]:

«Ս. Գաբրիելյանը մասնակցել է համամիութենական և միջազգային բազմաթիվ ցուցահանդեսների, խմբային և անհատական ցուցադրություններ ունեցել ԱՄՆ-ում, Անգլիայում, Իտալիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Հունաստանում, Եգիպտոսում, Լիբանանում, Բուլղարիայում, Կիպրոսում, Ֆինլանդիայում: Հատկանշական է այն

[1] ***Հայաստանի Հանրապետություն,*** *Երևան, թիվ 202, 2016, էջ 5:*

հանգամանքը, որ նրա 1500-ից ավելի կտավները գտնվում են արտերկրի մասնավոր հավաքածուներում, ինչը մեծ պատիվ է Արցախի միջազգային հարթակներում ներկայացնող գեղանկարչի, բոլոր արցախցիների համար»,[1]– գրում է բանաստեղծ Դավիթ Միքայելյանը:

Ս. Գաբրիելյանի արվեստի հմայքը առաջին հերթին պայմանավորված է գեղեցկությամբ: Իսկ այդ գեղեցկությունը բխում է ներկապնակի հարստությունից ու բազմազանությունից: Գույների խաղը, յուրօրինակ շեշտերը, դրանցից բխող ընկալման հետաքրքիր պահերը, ինքնատիպ ելևէջները, գունային մերթ ուժեղ, մերթ թույլ, բայց ներքին շերտավորում ունեցող պատկերները կախարդական ուժ ու հմայք են տալիս Ս. Գաբրիելյան արվեստագետի կտավներին:

Գունային կոմպոզիցիայով, գծային ռիթմիկ կառուցվածքով, արտահայտիչ ու ճկուն նկարագրերով աչքի են ընկնում նրա «Պար», «Հարսնահանդես», «Ցլամարտ» կտավները: Հետաքրքիրն այն է, որ էլ արվեստագետը փորձում է յուրացնել համաշխարհային արվեստի լավագույն արտահայտչաձևերը, միշտ երբ մնում է իր սեփական ու նոր աշխարհի մեջ, սեփական աշխարհով է հարաբերվում իրականությանը: Ս. Գաբրիելյանի ստեղծագործական աշխարհում կենտրոնում մարդն է, նրա ներաշխարհը, կյանքի հետ նրա ունեցած կապը: Առանձնահատուկ ուշադրության են արժանի գաբրիելյանական դիմանկարները, որոնք տարբեր կողմերից ընդգծում են կերպարի առանձնահատկությունը: Հիշենք նրա «Կնոջ դիմանկար», «Մայր», «Աղջկա դիմանկար», «Աննայի դիմանկար» և նմանատիպ մի շարք գործեր, որոնք ունեն ներքին չափազանց զգայականություն, ներաշխարհի բացահայտման բազում խորքեր ու գեղեցկություններ:

Հետաքրքիր է Գաբրիելյանի արվեստի կոմպոզիցիոն առանձնահատկությունը: Մե՛րթ ծավալականությունը, մե՛րթ մոնումենտալությունը հուշարձանակերտ բնորոշումներով հմայիչ են դարձնում կերպարը:

«Թափառական կրկես» կտավից թախիծ է ծորում, բայց մարդկայնորեն զուլալ, մաքրամաքուր, թեթև ու սահուն: Թախծոտ թեման մեր աչքի առաջ պայծառանում է, ասես կտավում ներկա է արվեստագետը՝ կրակոտ երևակայությամբ, բազմազան մտահղացումներով:

Ս. Գաբրիելյանը ստեղծեց իր՝ գաբրիելյանական դպրոցը, յուրատեսակ ձեռագրով ու ոճով՝ մինչև կյանքի վերջը անաղարտ պահելով հայրենիքի կերպարը, որը նրա կտավներում գոյության բանաձև է և արյան կանչ:

---

[1] *Նույն տեղում:*

Գրականություն

1. «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 5 նոյեմբեր, 2016:
2. «Ազատ Արցախ», մարտի 20, 2021:
3. «Հայաստանի Հանրապետություն», Երևան, թիվ 202, 2016:
4. «Հայաստանի Հանրապետություն», Երևան, նոյեմբերի 11, թիվ 203 (6249), 2015:
5. «Հայրենիք», Երևան, թիվ 9, հուլիս 30, 2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը: